«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մակվարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Հաստատություն՝ <<ԵՐԵՎԱՆԻ Հ. 93 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ 1. Մանկապարտեզի և ընտանիքի դերն ու նշանակությունը

երեխայի զարգացման հարցում

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում---------- 4

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում---------- 5

1.3 Ընտանիքի դերը մանկապարտեզում---------- 10

Գլուխ 2. Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը

և նմուշ օրինակը

2.1 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն---------- 11

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության նմուշ օրինակ------- 17

Եզրակացություն---------- 18

Գրականություն---------- 19

Ներածություն

Ընտանիքի դերը և ազդեցությունը զարգացման, անհատականության ձևավորման և ողջ կյանքի վրա անժխտելի է: Ընտանիքից հետո կարևոր գործառույթ է կատարում մանկապարտեզը, որը դառնում է գործընկեր, շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին: Ուստի երեխայի անհատական ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու օղակների համագործակցությունը:

Նպատակն ու խնդիրները: Ներկայացնել ընտանիքի և մանկապարտեզի դերը և նշանակությունը երեխայի զարգացման գործում, նաև ուսումնասիրել և ներկայացնել ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մոդելները:

- Հարգել սանի անձը և անհատականությունը, հաշվի առնել նրա ցանկությունը
- Արգելել միայն այն ինչն իսկապես վտանգավոր է սանի կյանքի և առողջության համար:
- Խրախուսել սանին, գովել
- Ժամանակ հատկացնել նրա հետ խաղալու և զբաղվելու համար:
- Խրախուսել նրան, բայց չմիջամտել նրա ինքնուրույնությանը:
- Նկատողություն անել նրա սխալ քայլերի համար, բայց ոչ երբեք՝ նրա անձի:

Թեմայի արդիականությունը: Այսօր թե' մանկապարտեզը և թե' ծնողական համայնքը ունի ավելի մեծ հնարավորություն հաղորդակցվելու, իրար աջակցելու համար: Եվ այդ համագործակցության արդյունավետությունով է պայմանավորված նոր սերնդի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Գլուխ 1. Մանկապարտեզի և ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում (Երջանիկ երեխա դաստիարակելու արվեստը)

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

Դաստիաարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեկայի զարգացման, նրանց գիտակցության ու վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Ծնվելու պահից երեխան հայտնվում է իր համար բոլորովին նոր մի միջավայրում, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեխայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից: Դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է նաև ծնողների միջև առկա պոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից:

Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգուրծությունն արդյունավետ է երեխայի Նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար: Ընտանեկանդ

Դաստիարակութնունն ամենիցառաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է երեխայի զարգացման ու դաստիարակության գործին վաղ միջամտության դերը: Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ լիովին կատարում են իրենց դերը՝ համալիր, բարենպաստ ներգործությունը: Պատճառները բազմազան են. որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները՝ չեն հասկանում դրա կարևորությունը:

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Երբ ընտանիք համալրվում է փոքրիկ անդամով, բնականաբար, ծնողները ցանկանում են, որ փոքրիկ հրաշքն ունենա երջանիկ մանկություն ու պայծառ հիշողություններ իր մանկության մասին: ներկայացնենք մի քանի խորհուրդներ, որոնք կօգնեն ձեզ լինել լավ ծնողներ և ձեր երեխային պարգևեք երջանիկ մանկություն ու ապագա:

Երեխայիին պետք է սիրել ոչ թե ինչ որ բանի համար, այլ առանց պայմանի: Երրեխան կարող է նեղացնել կամ բարկացնել ձեզ, սակայն նրա նկատմամբ ձեր սերը ոչնչից կախված չպետք է լինի: Առավել ևս չի կարելի երեխային ակնարկել, թե իրեն կսիրեք, եթե ....: Երեխան պետք է վստահ լինի, որ ինքն իր ծնողների ուրախությունն է անկախ ամեն ինչից: Չէ± որ մայրիկի տաքուկ գիրկը աշխարհում ոչ մի այլ բանի հետ չես կարող փոխել... Մեծահասակն օրական գոնե չորս անգամ, գրկախառնության կարիք ունի, իսկ երեխաներն՝ անհամեմատ ավելի շատ: Նրանք ավելի շատ սիրո և հոգատարության կարիք ունեն: Այդ իսկ պատճառով մի վախեցեք երեխային ավելորդ անգամ ցույց տալ ձեր սերը: Հաճախ գրկախառնվեք, ամեն առիթով և ամեն անգամ, առանց առիթների, շոյեք նրան ու քաղցր խոսքեր ասեք:

Երեխայի հետ անցկացրած ժամանակը գտած համարեք:

Երբեմն մեծահասակներին ձանձրալի է թվում երեխայի հետ անցկացրած ժամանակը: Մեկ երկու ժամ կարելի է ուրախանալ երեխայի խաղով, շարժումներով, իսկ հետո ժամանակը տրամադրել ավելի << իմաստալից >> բաներով զբաղվելու: Փոքր երեխայի կողքին նստելը մեծահասակի համար թվում ժամանակի զուր կորուստ: Բայց իրականությունն այլ է. Երեխայի հետ անցկացրած ամեն ժամը լրացնում է նրա ուրախ մանկության հիշողությունների շտեմարանը: Այնպես որ, պարզապես միշտ երեխայի կողքին եղեք, միասին ինչ-որ բաներ արեք:

Արգելեք միայն այն, ինչը սպառնում է երեխայի անվտանգությանը

Ծնողների համար <<ամենահեշտը>> երեխային արգելելն է. Ինչքան երկար է << չի կարելի>> -ների շարքը, այնքան ավելի հանգիստ են ծնողները: Սակայն նման դեպքում մանկության մասին երեխայի մեջ կմնան, ընդրամենը, <<բանտային>> հիշողություններ: Արգելեք միայն այն, ինչը սպառնում է երեխայի կյանքին կամ անվտանգությանը: Իսկ երբ փոքրիկը պատրում է թերթը և շաղ տալիս տնով մեկ կամ խորանարդիկներն է լցնում

իր զգեստապահարան, մի բարկացեք: Ճիշտ է, հետո ստիպված կլինեք երեխայի հետևից հավաքել, բայց փոխարենը զուր արգելքով չեք ճնշի նրա անհատականությունը:

Օրինակ՝ հաճախ եք հանդիպում նման իրավիճակի:

- Ի±նչ ես անում, չե±ս ամաչում... բա կարելի± է պատի վրա նկարել, - տարեկան աղջնակի թևից կոպտորեն բռնելով ու թափ տալով գոռում է մայրը:

Երեխան սկզբում վախեցած ու զարմացած նայում է իր մայրիկին՝ չհասկանալով տեղի ունեցածը: Չէ± որ ինքը մայրիկին էր նկարել ու նկարածը, իր կարծիքով, այնքան լավ էր ստացվել: Բայց լսելով մայրիկի գոռգոռոցը, նա վախից սկսում է լաց լինել: Ու նորից լսում է.

Ի±նչ ես զոռցդ գցել... Պատի թանկ պաստառը փչացրեցիր, տես քեզ ինչ կանեմ...

Երեխան լացն ավելի ուժեղացնելով, անօգնական փաթաթվում է մայրիկի ոտքերին: Նա այդ ձևով մայրիկից պաշտպանելու համար մայրիկից պաշտպանություն էր խնդրում...

Աշխատեք հասկանալ և ընդունել երեխայի արժեհամակարգը

Մեծահասակների չափանիշներով՝ բոլոր երեխաները <<զժուկներ>> են: Նրանք կարող են իրենք իրենց հետ խոսել, կարող են երբեմն կծել, կամ աստիճանները թողած՝ ժամերով տանջվել հարթասահուն վայրեջքի մասից վեր բարձրանալ: Պարզապես երեխաների աշխարհն այլ է, և այն, ինչ մենք հիմարություն ենք համարում, նրանց համար շատ կարևոր է: Որքան էլ ձեզ ծիծաղելի թվա երեխայի ցանկությունը, աշխատեք լուրջ ընդունել: Քանի որ անգամ մանրուքի դեպքում մերժումը կարող է երեխայի համար ողբերգական լինել: Իսկ երբ օգնում եք երեխային իր գործողություններում, նա ձեզ ընդունում է որպես հուսալի մարդ, ոչ թե մեծահասակների << հիմար և անհասկանալի>> աշխարհի ներկայացուցիչ:

Ձեր երեխային լուրջ ընդունեք: Նրա հետ հաճախ խորհրդակցեք, հարցրեք նրա կարծիքը, թույլ տվեք, որ նա քննարկման լիիրավ մասնակից զգա իրեն: Դժվար թե երեխան որոշիչ ինչ-որ բան ասի, սակայն տպավորությունը, որ նա մասնակցում է որոշումների կայացմանը, որ իր կարծիքը հաշվի եք առնում: Դա կբարձրացնի նրա ինքնագնահատականը նաև հարգանքը ձեր հանդեպ:

Ամենավատ պատասխանը, որ կարող եք տալ երեխայի հարցին << Դու դեռ փոքր ես, չես հասկանա...>>: Իրականում շատ քիչ բաներ կան, որ չեք կարողանա բացատրել երեխային իրեն հասկանալի մակարդակով: Իսկ եթե նման բաներ կան, հավանաբար չեն հասկանում նաև շատ մեծահասակներ: Փորձեք պատասխանել երեխայի հարցերին,

բացատրել նրա համար անհասկանալին: Անգամ եթե նա չհասկանա, լուրջ տեսքով գլուխը դրական կշարժի: Նա այդ ձևով կգնահատին ձեր վերաբերմունքը:

Երբ երեխան շարունակ իր հարցերն է տալիս. <<Սա ի±նչ է, ինչի± համար է...>> ծնողը պետք է նպաստի նրա մտածելու զարգացմանը, նա պետք է պատասխանի նրա բոլոր հարցերին: Եթե երեխային ասում ենք այս ինչ բանը անգիր արա, եթե անես քեզ կոնֆետ կտամ... Պետք չէ ռոբոտ աճեցնել... Կամ, պետք չէ փոքր տարիքից նրա ուղեղը լցնել այն ինֆորմացիայով, որը նրան կյանքում պետք չէ: Նայեք շրջապատում, կհամոզվեք: Հիմնականում նախագահները, նախարարները ծնունդով գյուղից են, որովհետև նրանք մեծացել են ավելի ազատ, բնության հետ շփվելով: Երեխային հատկապես պետք է սովորեցնել ինչպես խնդիրը լուծել և ձգտել նպատակին, չմեռանալով, որ եթե միայն կարիերայի, այսինքն՝ մի ոտքի մասին մտածի, իսկ ընտանիքը թողնի հետո, ապա մյուս ոտքը չի աճի, մարդը կաղ կմնա:

Մի քննարկեք ու դիտողություն արեք երեխային ուրիշների ներկայությամբ

Մի քննարկեք երեխային վերաբերվող հարցերը ուրիշների ներկայությամբ: Դա ամաչեցնում է երեխային, նրան անհարմար դրության մեջ դնում:

Երեխային տվեք ոչ թե լավագույնը աշխարհում, այլ ձեր մեջ եղած լավագույնը

Այո, երեխային տվեք ոչ թե լավագույնը աշխարհում, այլ այն լավագույնը, որ կա ձեր մեջ: Երբ ձգտում եք երեխային նյութապես ապահովել, հիշոք, որ միշտ էլ կգտնվեն մարդիկ, որոնց երեխաներն ավելի ապահովված կլինեն, որոնք ավելի լավ վայրերում կարող են հանգստանալ: Պարզապես ուժերը ներածին չափով երեխայիի կողքին եղեք, նվիրվեք նրան: Երեխան դա բարձր կգնահատի և ձեզ կհամարի լավագույն ծնողը աշխարհում:

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին փուլը երեխայի համար մանկապարտեզն է: մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում. Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝նոր կանոններով, նոր արօրյայով: Այն միի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը: Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը:

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր

տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն:

Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ուրույն ոճը:

- Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:
- Երեխաների հետ իրականացվող գործողությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը, մտածողությունը:
- Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով:

Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը:

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող, երեխաներին խրախուսող խաղեր:

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց: Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն: Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է: Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին: Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին:

Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանկյունից. Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն, ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնել լացով, ապա նոր միջավայրում նա ստիպված է հարմարվել

և ուրիշ կարծիքը հաշվի առնել: Սահմանվում է հստակ օրագարգ. Փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին: Ճիշտ սահմանված օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել: Օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը, ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնումէ երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը: Մանկապարտեզ հաճախելն ունի մի շարք առավելություններ:

- Կա հատուկ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմիին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝ անհնար:
- Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում:

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ մանկապարտեզից հետո երեխաներն ավելի արագ և հեշտ են հարմարվում դպրոցին: Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած ուսումնական գիտելիքներն են (տառաճանաչություն կամ մաթեմատիկա) այլ կյանքի մի շարք հմտությունները, օրինակ՝ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության կենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն:

1.3 Ընտանիքի դերը մանկապարտեզում (աշխատանքի կազմ. ն/դ հաստատությունում):

Մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այդ համագործակցությունից շահում է թե' երեխան, թե' ընտանիքը, թե' տվյալ հաստատությունը:

Ծնողները երեխայի առաջին ուսուցիչներն են և առաջին օգնական ծառայողները: Իսկ երեխաները հրաշալի տնօրինողներ են: Այդ իսկ պատճառով ծնողները (և երեխայի հետ շփվող բոլոր մեծահասակները) պետք է հետևեն իրենց ցանկացած քայլին, խոսքին և կատարած գործողություններին: Բայց ընտանիքները շատ տարբեր են և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթությանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատնացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում:

Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և պրոֆեսիոնալ մանկավարժի դերը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը, ավելի միավուրում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

Գլուխ 2. Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը և նմուշ օրինակը

2.1 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրթապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների,

համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության և զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. Դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարել նաև տանը:
- Գրքերի փոխանակումներ. Սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների ու մանկավարժների համար,ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:
- Այցելություններ ընտանիք.
- Բաց դռների օրեր.
- Հարց ու պատասխանի ցերեկույթներ.
- Մանկավարժական հյուրասրահ.
- Գաղափարների տոնավաճառ.
- Վստահության հեռախոս.

- Բարի գործերի օրեր.
- Կլոր սեղան.
- Զրույցներ՝ անհատական և խմբային.
- Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.
- Անկետավորում.
- Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.
- Փառատոներ և տոնակատարություններ.
- Սպորտային միջոցառումներ.
- Ցերեկույթներ.

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց:

Սեպտեմբերին բոլոր խմբերում անցկացվում են ծնողների հետ հարցումներ՝ ելնելով նրանց խնդիրներից և հետաքրքրություններից: Ըստ այդմ էլ պլանավորվում են <<Բաց դռների օր>>, <<Ընտանեկան թերթի թողարկում>>, <<Ընտանեկան սպորտային միջոցառումներ>>, <<Հայրիկը, մայրիկը և ես>> ու նմանատիպ այլ միջոցառումներ: Եվ այսպես՝ մայրերը, նաև հայրերը (ինչը հատկապես խիստ ցանկալի է) ամենագործուն մասնակցություն են բերում նախադպրոցական հաստատությունների աշխատանքներին: Իսկ դա նպաստում է երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: Ընտանեկան պատի թերթերում կարող են տպագրվել՝ <<Ես պաշտպանում եմ արողջությունս>>, <<Նոր տարին մոտենում է>>, <<Հայրենիքի պաշտպանները>> և այլ խորագրերով հոդվածներ:

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: Տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողի համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրերով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ թղթապանակներ, որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտոնյութեր: Դրանց

միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի <<Խորհուրդ են տալիս ծնողները>> ընդհանուր խորագրով նյութերը (այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքներ են փոխանակում): Ներառված են նաև <<Նոր բուժման ձև գրիպից>>, <<Աղցանների բաղադրատոմսեր>>, <<Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ>> և այլ օգտակար խորհուրդներ:

- Ճանաչելով ընտանիքներին դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատնվել գոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:
- Ժողովների մասի հայտարարությունից և ընդհանուր տեղեկարվությունից բացի յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդե'ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերրպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրե'ք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:
- Ստեղծե'ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնեղների հետ քննարկե'ք երեխային առնչվող սեցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրե'ք, թե ինչպե±ս կարելի է հասնել դրանց: Նշե'ք անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:
- Օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի <<տարածքն>>է:
- Հաղորրդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից:
- Շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա:
- Ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:
- Անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը:

- Եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու:
- Անպայման պետք է ապահովել հետադարձ կապը (հանձնարարականներ, այցելություն, երկտող ծնողներին, …):

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերն սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրարից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնո±ղն է, երեխա±ն, թե± ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով:

Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին:

Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն

ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժին տեղեկացնել հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամեօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը:

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը, մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև <<Վստահության հեռախոս>>, <<Մանկավարժի հյուրասրահ>>, <<Գաղափարների տոնավաճառ>>: Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում):

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ <<Ամենահամերաշխ ընտանիիքը>>: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք կամ ընտանիք-դպրոց արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1 հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն

2 ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության նմուշ օրինակ

Կազմակերպվեց <<Աշնանային-ցուցահանդես>>խորագրով թեմատիկ ցուցահանդես: Ցուցահանդեսում ընդգրկված էր ծնողների ձեռքի աշխատանքներիը՝ սաների մասնակցությամբ: Ընտրվեց խմբի լավագույն աշխատանքը և ծնողը սանի հետ միասին պարգևատրվեց պատվոգրով: Տեսնելով և' ծնողի, և' սանի ոգևորությունը եկանք այն եզրակացության, որ մուտք գործելով մանկապարտեզ, ծնողը սկսում է ավելի լավ հասկանալ մանկավարժական մոտեցումները, նկատել դժվարությունները, դիտարկել իր երեխայի վարքը՝ չհենվելով միայն դաստիարակի կատարած դիտարկումների ու կարծիքի վրա: Եվ այս ամենից շահում է և' դաստիարակը, և' ծնողը, և' սանը:

Հետազոտական աշխատանքը ներկայացնելիս հաշվի եմ առել նախադպրոցական տարիքի սաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ընբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և տարրական, բարոյական արժեքային հարաբերությունները:

Կապը չափորոշչի հետ.

- Տարբերակել շրջապատող մարդկանց հուզական վիճակն ու զգացմունքները, համադրել իր և մյուսների ցանկությունները.
- Հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերություններում դրսևորել ընդգծված վերաբերմունք, ընկալել մարդկանց տրամադրվածությունն իր նկատմամբ, դրսևորել հանդուրժողականություն, օգնության ձեռք մեկնել, ապրումակցելու կարողություններ.
- Պահպանել բարեվարքության նորմերը.
- Դրսևորելսեփական հույզերի ու գործողությունների, մտքերի և վերաբերմունքի մասին խոսելու պատրաստակամություն:

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրելով, ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մոդելները, եկանք այն եզրահանգման, որ՝

- Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար:
- Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից: Մակկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է:
- Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ-ընտանիք կապը:
- Ընտանիք-պարտեզ արդյունավետ համագործակցությունը մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրանից շահում են թե՛ ընտանիքը, թե՛ պարտեզը, իսկ որ ամենակարևորն է, արդյունքում շահում է ինքը՝ երեխան:

Գրականություն

1. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար (Հ. Միտոյան, Լ. Սմբատյան) 2010թ.
2. Երջանիկ երեխա դաստիարակելու արվեստը (Էմմա Տանանյան) 2016թ.
3. Աշխատանքի կազմակերպումը ն/դ հաստատությունում (Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան) 2008թ.
4. Համացանց